— Ատելութիւն սերմանել եղբայրների մէջ:

— Այո՛, ատելութիւն սերմանել: Բայց մի այլ պատճառ եւս պէտք է ի նկատի առնել: Այդ մարդիկը հէնց սկզբանէ անկիրթ են եղել եւ ոչինչ բարոյական մաքրութիւն չեն ունեցել: Վեր առէք իւրաքանչիւր նոր կրօնափոխ եղած հայ-կաթոլիկին առանձին, քննեցէք նրա անցեալը, քննեցէք նրա վարած կեանքը, անպատճառ կը գտնէք նրա մէջ մի հին կեղտ: Այդպիսի մարդիկ միայն մօտենում են եզոիտներին, եւ այդպիսի մարդկանց մօտենում են իրանք եզոիտները: Ամէն մի յայտնի սրիկան նրանցից պաշտպանութիւն է գտնում: Ինչո՞ւ: Որովհետեւ նրանց միջոցով աւելի հեշտ է խաղաղ ժողովրդի մէջ երկպառակութիւն ձգել, միմեանց հետ կռռացնել, որդին իր ծնողաց դէմ ապստամբացնել եւ այլն: Իսկ երկպառակութիւնից նրանք միշտ օգուտ են քաղում: Այդ մարդը, որ ձեզ հետ վիճում էր, մի քանի անգամ սնանկացած, իր պարտատէրերի ձեռքից փախած գինեվաճառ է: Հիմա եզոիտի մօտ ծառայ է դարձել. նրան ե՛ւ խոհարարն է, ե՛ւ գործակիցը: Դուք կը տեսնէք նրան խոհանոցի ղենջակը առջեւը կապած, փողոցում կանգնած, անցնողների հետ քաւարանի կամ պապի Յիսուս Քրիստոսի յաջորդ լինելու մասին կվիճէ, թէեւ ինքը բոլորովին տգէտ եւ գռեհիկ մարդ է:

— Միեւնոյնը ես նկատեցի Բաղէշում, այդպէս էին վարւում եւ հայ-բողոքականները:

— Բոլորը միեւնոյն տեսակից են: Այդ օտարազգի քարոզիչները հաւաքում են հասարակութեան մրուրը, հասարակութեան կեղտը: Երանի՜ թէ, մաքրելու նպատակով լիներ... Նրանք փոխում են իրանց հետեւողների անունը միայն, իսկ կեղտը մնում է... Միթէ՞ լոկ անունը կարող է փոխել մարդու բարոյական կազմակերպութիւնը: Մէկը երէկ հայ-լուսաւորչական էր, այսօր նրան կոչում են հայ-բողոքական, կամ հայ-կաթոլիկ, դարձեալ նոյն մարդն է...

Այդ խօսակցութեան միջոցին երիտասարդի շրթունքները դողում էին, նրա ձայնը փոփոխւում էր, երեւում էր, որ նա զգացել էր այդ բոլորը, երեւում էր, որ նրա մտածութեան մշտական առարկան էին դարձել հայ հասարակութեան այդ անբուժելի վէրքերը: Բայց զարմանալին այն էր, որ ես այդ անծանօթ երիտասարդի եւ Ջալլադի դատողութիւնների մէջ գտնում էի շատ նմանութիւններ, կարծես երկուսն էլ միեւնոյն նպատակին էին ձգտում, երկուսն էլ միեւնոյն վնասակար երեւոյթների դէմ էին բողոքում: Ջալլադը, որպէս վերջը յայտնուեցաւ, բողոքական քահանայ էր: Բայց ո՞վ էր այդ երիտասարդը, որ Բաղէշում անսպասելի կերպով միացաւ մեզ հետ: Ասլանը այդ մասին դեռ ոչինչ չէր ասել ինձ: Երբ նա խօսում էր, ես կարմրում էի նրա առջեւ: Նա այն